ԴԱՍ 10

ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

1 Վկայի պաշտպանության միջոցներ են

Ա անանուն ցուցմունքների օգտագործումը: *Միայալ է, քանի որ թեև նշվածը պաշտպանության միջոց է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Բ քողարկումը, ձայնի աղավաղումը: *Միայալ է, քանի որ թեև նշվածը պաշտպանության միջոց է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Գ տեսակապի միջոցով հարցաքննությունը և ամբաստանյալին կամ հանրության ներկայացուցիչներին դատական նիստերի դահլիճից հեռացնելը: *Միայալ է, քանի որ թեև նշվածը պաշտպանության միջոց է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Դ ճիշտ են թվարկված բոլոր պատասխանները: ***Ճիշտ է՝ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ:***

2 Վկայի ինքնությունը չբացահայտելու համար

Ա վկայի կյանքը կամ ազատությունը պետք է լրջագույնս վտանգված լինի: *Միայալ է, քանի որ թեև նշվածը վկայի ինքնությունը չբացահայտելու պայմաններից է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Բ դատարանը պետք է պատշաճ քննություն իրականացնի՝ պարզելու համար վկայի վախի համար օբյեկտիվ հիմքերի առկայությունը: *Միայալ է, քանի որ թեև նշվածը վկայի ինքնությունը չբացահայտելու պայմաններից է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Գ վկան պետք է ապահովի իր վստահելիության և արժանահավատության երաշխիքներ: *Միայն է, քանի որ թեև նշվածը վկայի ինքնությունը չբացահայտելու պայմաններից է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Դ անհրաժեշտ է վերը նշված բոլոր պայմանների առկայությունը: ***Ճիշտ է՝ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ:***

3 Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի գնահատմամբ՝ ներքոնշյալ միջոցներից ո՞րը կարող է օգտագործվել վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի ինքնությունը թաքցնելուն համար.

Ա նախնական քննության փուլում վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի կողմից տրված ցուցմունքների տեսաձայնագրումը: *Միայն է, քանի որ թեև նշվածը կիրառման ենթակա միջոց է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Բ վկային նույնականացնելու հնարավորություն ընձեռող տվյալները թաքցնելը մինչև վարույթի հնարավորինս ուշ փուլերը կամ միայն ընտրված տվյալները տրամադրելը: *Միայն է, քանի որ թեև նշվածը կիրառման ենթակա միջոց է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Գ վկաներին կամ արդարադատության հետ համագործակցող անձանց ինքնությունը թաքցնելու հնարավորություն ընձեռող սարքերի օգտագործումը, ինչպիսիք են՝ էկրաններ ու վարագույրներ օգտագործելը, վկայի դեմքը քողարկելը կամ ձայնն աղավաղելը: *Միայն է, քանի որ թեև նշվածը կիրառման ենթակա միջոց է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Դ ճիշտ են թվարկված բոլոր պատասխանները: ***Ճիշտ է՝ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ:***

4 Հիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

Ա Անանուն վկաների ցուցմունքների օգտագործումն անհամատեղելի է Եվրոպական կոնվենցիայի հետ: *Միայն է, քանի որ Եվրոպական դատարա-*

նի նախադեպային իրավունքի համաձայն՝ որոշակի պայմանների առկայության դեպքում այդպիսիք կարող են օգտագործվել:

Բ Անանուն վկաների ցուցմունքների օգտագործումն անհամատեղելի չէ Եվրոպական կոնվենցիայի հետ, եթե վկայի ինքնությունը չբացահայտելը բավարարում է համաչափության ապահովման պահանջին, և վկայի պաշտպանության նպատակն իրացված է պաշտպանության կողմի իրավունքները նվազ սահմանափակող միջոցի կիրառմամբ: ***Ճիշտ է, քանի որ լիարժեք համապատասխանում է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:***

Գ Անանուն վկաների ցուցմունքների օգտագործումն անհամատեղելի է Եվրոպական կոնվենցիայի հետ, եթե վկան ոստիկանության աշխատակից է կամ գաղտնի գործակալ: *Միայն է, քանի որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում նման պայման նախատեսված չէ:*

Դ Հիշյալ պնդումներից որևէ մեկը ճիշտ չէ: *Միայն է, քանի որ 2-րդ պատասխանը ճիշտ է:*

5 Վկաների նախաքննական ցուցմունքներն օգտագործելու ՄԻԵԴ մշակած իրավաչափության պայմաններն է(են)՝

Ա առկա է վկայի չներկայանալու հիմնավոր պատճառ, և ձեռնարկվել են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ վկայի՝ դատական քննությանը ներկայությունն ապահովելու համար: *Միայն է, քանի որ թեև նշվածը պայմաններից մեկն է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Բ միակ և վճռորոշ ցուցմունքի սկզբունքը: *Միայն է, քանի որ թեև նշվածը պայմաններից մեկն է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Գ հակակշռող գործոնների առկայությունը: *Միայն է, քանի որ թեև նշվածը պայմաններից մեկն է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Դ ճիշտ են թվարկված բոլոր պատասխանները: ***Ճիշտ է՝ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ:***

6 Վճռորոշ ցուցմունք է

Ա **գործի ելքի համար որոշիչ նշանակություն ունեցող ցուցմունքը:** ***Ճիշտ է, քանի որ բիտում է Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից:***

Բ ականատես վկայի ցուցմունքը: *Միայն է, քանի որ քրեադատավարական օրենքն ապացույցի տեսակով պայմանավորված՝ ապացուցողական նշանակության նման տարբերակում չի նախատեսում:*

Գ տուժողի ցուցմունքը: *Միայն է, քանի որ քրեադատավարական օրենքն ապացույցի տեսակով պայմանավորված՝ ապացուցողական նշանակության նման տարբերակում չի նախատեսում:*

Դ ճիշտ են թվարկված բոլոր պատասխանները: *Միայն է, քանի որ ճիշտ է պատասխաններից միայն մեկը:*

7 Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ արդար դատաքննության իրավունքի համատեքստում:

Ա **Բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում:** ***Ճիշտ է, քանի որ բիտում է Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից:***

Բ Որպես ապացույց կարող են օգտագործվել բացառապես վկայի՝ հրապարակային դատաքննության ընթացքում տված ցուցմունքները: *Միայն է, քանի որ Եվրոպական դատարանը և ՀՀ վճռաբեկ դատարանը որոշակի պայմանների առկայության պարագայում նախատեսում են նշված կանոնից բացառություն:*

Գ Վկայի նախաքննական ցուցմունքների օգտագործումը հակասում է ՄԻԵԿ 6-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության իրավունքին: *Միայն է, քանի որ Եվրոպական դատարանը որոշակի պայմանների առկայության պարագայում նախատեսում է նման հնարավորություն:*

Դ Նշված բոլոր պատասխանները ճիշտ չեն: *Սխալ է, քանի որ պատասխաններից առնվազն մեկը ճիշտ է:*

8 Հակակշռող գործոնների առկայությունը պետք է ուսումնասիրվի միայն այն գործերով, որոնցով

Ա վկայի ցուցմունքը եղել է միակը կամ վճռորոշը: *Սխալ է, քանի որ թերի են ներկայացված պայմանները:*

Բ վկայի ցուցմունքը եղել է միակը կամ վճռորոշը, կամ թեև վկայի ցուցմունքը միակը կամ վճռորոշը չի եղել, այնուհանդերձ, այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի միջոցները: *Ճիշտ է, քանի որ բխում է Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից:*

Գ միակը կամ վճռորոշը տուժողի ցուցմունքն է: *Սխալ է, քանի որ հակակշռող գործոնների առկայությունը պետք է ուսումնասիրվի՝ անկախ ապացույցի տեսակից:*

Դ ցուցմունքներից և որևէ մեկը միակը կամ վճռորոշը չէ: *Սխալ է, քանի որ հակասում է հակակշռող գործոնների ուսումնասիրության անհրաժեշտության գաղափարին:*

9 «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով ազդարարի համար նախատեսված երաշխիքներն են

Ա անձնական տվյալների չբացահայտումը: *Սխալ է, քանի որ թեև նշվածն օրենքով նախատեսված երաշխիք է, ճիշտ է նաև 2-րդ պատասխանը:*

Բ վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունքը: *Սխալ է, քանի որ թեև նշվածն օրենքով նախատեսված երաշխիք է, ճիշտ է նաև 1-ին պատասխանը:*

Գ անհատական պաշտպանության միջոցների տրամադրումը: *Սխալ է, քանի որ նշվածը նախատեսված չէ օրենքով:*

Դ **ճիշտ են 1-ին և 2-րդ պատասխանները:** ***Ճիշտ է՝ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ:***

10 ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցներից են

Ա պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը: *Սխալ է, քանի որ թեև նշվածը պաշտպանության միջոցներից է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Բ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը: *Սխալ է, քանի որ թեև նշվածը պաշտպանության միջոցներից է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Գ դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը, դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման: *Սխալ է, քանի որ թեև նշվածը պաշտպանության միջոցներից է, ճիշտ են նաև մյուս պատասխանները:*

Դ **ճիշտ են թվարկված բոլոր պատասխանները:** ***Ճիշտ է՝ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ:***